ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Զեկուցող՝ Ա.Սուքիասյան

Երևանի քաղաքապետի տեղակալ

Յուրաքանչյուր պետություն, քաղաք, այլոց կողմից ընկալված խորհրդանիշներից զատ, ինքն իրեն ու աշխարհին ներկայանալի է նաև իր մշակույթով, մշակութային ժառանգությամբ, դրա ավանդույթներով, ժամանակակից արվեստով: Այն որքան որ նպաստավոր է ինքնաճանաչողությանը, նույնքան էլ տվյալ էթնոսին ճանաչելի է դարձնում մշակութային բազմազանության միջավայրում:

Հազարամյակների մեր ժողովուրդը իրեն դիտում է որպես մշակութային ազգ, որոշ առումով հանդիսանալով նաև դոնոր մի շարք երկրներում: Ժողովրդի կերպը, տեսակը բնորոշում է նրա ստեղծագործությունը, որի արարողը դարեր շարունակ մնում է անհատը, անձը, անհատականությունը: Ուրեմն մի շարք մշակութային կայացած գործիչներ ու անհատականություններ մեզ համար նույնպես մշակութային արժեք են: Ահա այս ձևակերպմամբ սկսենք զեկույցը մի քաղաքի մշակութային հեռանկարի մասին, ուր ստեղծագործ անհատներով է պայմանավորվում մեր շարադրելիք տեսլականը մշակույթի և, դրանով իսկ պայմանավորված, տուրիզմի հնարավոր զարգացման շրջանում:

***

Երևանը, որպես համայն հայության գիտակրթական և մշակութային զարկերակ իր մեջ է ներառում հանրապետության մշակութային գիտական, կրթական և կենտրոնների շունչը: Քաղաքում գործում են երկու տասնյակ թատրոններ, 60-ից ավել թանգարաններ, երեք տասնյակից ավել գրադարաններ, բազմաթիվ համերգասրահներ, բարձրագույն ուսումնական հաստատություններ, տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների կենտրոններ, մարզամշակութային համալիրներ և քաղաքամայրին վայել այլ կարևոր հաստատություններ:

Նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման և փոխանցման խնդիրներից զատ, այսօր անհրաժեշտություն է արդի արվեստի

կայացումը, հանրայնացումը և նրա քաղաքային մշակույթում, որպես քաղաքի մշակութային ձեռագիր ամրագրումը։

Մշակույթի ոլորտում քաղաքապետարանի կողմից իրականացվել են մշակութային արժեքների պահպանմանը, ոլորտի կադրերի որակի և նրանց սոցիալական վիճակի բարելավմանը, մշակութային ժառանգության մատչելիության ապահովմանը նպատակաուղղված բազմաթիվ միջոցառումներ։ Ժամանակակից արվեստի ենթակառուցվածքների զարգացման նպատակով շարունակաբար իրականացվում են մշակութային կազմակերպությունների շենքերի և շինությունների վերանորոգման և նյութատեխնիկական բազայի ապահովման աշխատանքներ։ Վերջին տարիներին արվել է մեծ ծավալի աշխատանք։

Քաղաքի մշակութային կյանքի գունապնակում օրեցօր ավելանում են նոր գույներ ու երանգներ, որոնցից շատերի ներկայությունը կարող է կրել «առաջին անգամ» խորագիրը։ Դրանք նոր խոսք են, մտահղացում և մասնագիտական մտքի նոր թռիչքի վկայություն, փորձեր, էքսպերիմենտներ, որոնք ի դեպ միշտ չէ, որ երևանցու համար դառնում են հոգեհարազատ, թեպետ առկա են հաջողված ծրագրեր, որոնք ենթակա են ավանդական ու ամենամյա դառնալու։ Սա թերևս միջոցառումների, փառատոնների մասով, սակայն առօրյա հոգսերի տակ ապրող քաղաքի ինքնակառավարման մարմիններն ու համայնքը ընդգծված ու հատուկ ուշադրություն են դարձնում Երևանի վաղվա մտավոր օրվան, որտեղ նախ և առաջ քաղաքի երեխաներն են, պատանիներն ու երիտասարդները, հաստատություններ, ուր կրթվում են Երևանի ապագան կերտողները։

Դպրոցական կյանքի շարունակական մաս է Երևանի քաղաքապետարանի ենթակայության 15 երաժշտական, 11 արվեստի և այլ արտադպրոցական կրթահամալիրների ամբողջությունը, որը հանրակրթությանը զուգահեռ դպրոցականին տալիս է նաև մշակութային կրթություն, կայացնում կատարողական արվեստի և ստեղծագործող երեխաներին։ Ի դեպ մշակութային այս դպրոցների փաստը մեր հպարտություններից է, քանզի շատ ու շատ քաղաքներում այն բացակայում է կամ սահմանափակվում է մասնավոր քոլեջներով։

Հետևաբար այս հաստատությունների համար արվում է հնարավորինս բարվոք պայմաններ և կրթական բարձր մակարդակ ապահովելու համար։ Մշակութային կրթությունը համարում ենք սկզբնաղբյուր, հետևաբար առաջինը 2025-ի

հեռանկարում կշարադրենք անհրաժեշտ միջոցառումներից և անելիքներից հետևյալը.

- ✓ լավագույն կրթարաններց մի քանիսի ներուժը ժողվելով և բարձրացնեով կրթական ցենզը՝ մեկ երկուսը դարձնել միջազգային մասնագիտական դպրոցներ՝ առավել որոշակիացնելով դրաց կերպը. օրինակ՝ կերպարվեստի, վոկալի և այլն,
- ✓ երաժշտական գործիքներ արտադրող համաշխարհային կառույցների հետ համագործակցությամբ՝ ձեռքբերել և թարմացնել գործիքների արդի տխուր բազան /սա ի դեպ թանկ հաճույք է/: Միջոցներ ներդնել և սաների համար կազմակերպել անվանի երաժիշտների ու արվեստագետների վարպետության դասընթացներ, որոնք հստակ մաս կկազմեն կրթական տարեկան ծրագրի:

Երևան քաղաքում գործող բազմաթիվ թանգարանների, ցուցասրահների, պատկերասրահների առաջ ծառացած խնդիրներից է ռեստավրացիոն կազմակերպություն ունենալու հարցը: Հաշվի առնելով պատերազմական տարիների հետևանքները՝ փաստում ենք, որ էապես վնաս է կրել մեր մշակութային ժառանգության զգալի տոկոսը, այդ թվում՝ կտավներ, որմնանկարներ, խեցեգործության բնօրինակներ, որոնք տասնյակ և հարյուրավոր տարիների կենսագրություն ունեն, սակայն նրանց վերականգնման մասնագիտական լուրջ միջամտության անհրաժեշտություն է առաջացել: Կարծում ենք, որ մեր ունեցած թանգարանների ռեստավրացիոն փոքրիկ բաժինները գործում են ոչ այնքան բավարար: Սա պայմանավորված է ինչպես մասնագիտական ռեսուրսի պակասով, այնպես էլ համապատասխան նյութերով և, իհարկե, զարգացող աշխարհում հայտնի և, գուցե մասամբ, մեզ անհայտ նոր տեխնոլոգիաների համապատասխան սարքավորումների բացակայությամբ:

Այո, Երևանին իր այս ահռելի քանակի հավաքածուների գրագետ պահպանման ու շահագործման համար անհրաժեշտ է, որ ունենա զարգացած, անընդհատ գործող մի առանձին մասնագիտացված հիմնարկ, կազմակերպություն, կենտրոն, որի հիմնադրման համար համայնքային հնարավոր ներդրումից նույնքան կարևոր կլինի նաև մասնագետների միջազգային ամենատարբեր դպրոցներում ուսումնառությունը, որոնց կրթված վերադարձի պարագայում մենք հնարավորություն կունենանք մեր

պահուստներում գտնվող բացառիկ ստեղծագործություններն ու նմուշները ավելի համարձակ ներկայացնելու հանրույթին, երևանցիներին, զբոսաշրջիկներին։

Երևան քաղաքն ունի բազմաթիվ կայացած փառատոններ. երաժշտական, թատերարվեստի, կինոարվեստի և այլն։ Սրանց զգալի հատվածը միջազգային են և ունեն իրենց ուրույն հեղինակությունը մասնագիտական ոլորտներում, ինչպես նաև միջազգային լայն շրջանում։ Սա նույնպես հանդիսանում է տուրիզմի համար լուրջ խթան։

Երևանյան բնակլիմայական պայմանները թույլ են տալիս գրեթե 6 ամիս ունենալ բացօթյա միջոցառումներ։ Մեր ժողովուրդը և երևանցին առանձնակի վերաբերմունք ունի համընդհանուր տոնակատարություններին և համաժողովրդական մշակութային իրադարձություններին։ Այս ծրագրերի զգալի հատվածը տեղի է ունենում Ազատության հրապարակում, Հանրապետության հրապարակում, երբեմն՝ Կասկադ համալիրում։ Եվ յուրաքանչյուր առիթի տեխնիկական հագեցվածությամբ համալրվում են վերը նշված հարթակները, որպեսզի ծառայեն մշակութային ծրագրին՝ հյուրընկալելով բազմահազարանոց հանդիսականին, ուր հաճախ առկա է տեսանելիության խնդիրը, բեմահարթակի և հրապարակների մասշտաբի անհամատեղելիությունը, տեխնիկական խնդիրները և այլն։

Ժամանակն է, որ Երևան քաղաքն ունենա բացօթյա ամֆիթատրոն՝ դասական ու ակադեմիական իմաստով, ճարտարապետական գրագետ լուծմամբ, անշուշտ, ունենալով նաև հատուկ տվյալ ամֆիթատրոնի համար մոնտաժված բացօթյա միջոցառումներին բնորոշ լուսային, ձայնային տեխնիկա, գերժամանակակից էֆեկտներով հագեցված համապատասխան սարքավորումներ, ճկուն բեմահարթակ, տեսաէկրաններ, ըստ անհրաժեշտության կիրառվող ծածկի համապատասխան կոնստրուկցիա և այլն։ Անշուշտ, այս գաղափարը լուրջ միջոցներ է ենթադրում. այն , կարծում ենք, հնարավոր կլինի իրականացնել ինչպես համայնքային բյուջեի, այնպես էլ պետական աջակցությամբ, հուսանք նաև, մասնավոր սեկտորի ներդրման շնորհիվ, որի արդյունքում մայրաքաղաքը կունենա ներկայանալի հարթակ, ռեժիսորական ամենատարբեր հնարքների ու մտահղացումների ծառայող, պետական, քաղաքային նշանակության զանգվածային միջոցառումների իրականացման համար։

Սրա հնարավոր տեղանքի մասին քննարկումները սկսված են. ինչպես հայտնի է Երևանի կենտրոնը խիտ է և հագեցած, սակայն այն չի կարող լինել քաղաքի ծայրամասում: Ուրախ կլինենք լսելու տեղանքի մասին առաջարկներ, և ոչ միայն տեղանքի մասին: Հնարավոր է նաև այս գաղափարի համալիր տարբերակը որևէ արվարձանային հատվածում՝ ներառելով ընտանեկան հանգստի՝ այգի, պուրակ, սպասարկման կետեր և այլն: Վստահաբար այն պիտի ունենա իր իրավական կարգավիճակը կազմակերպության տեսքով, իր մշտական սպասարկող մասնագիտացված անձնակազմը: Այս հարթակը կծառայի շատ-շատերին ինչպես միջազգային փառատոնների, այնպես էլ անհատ կատարողների մենահամերգների, երիտասարդների բազմաժանր ծրագրերի ամֆիթատրոն:

2012 թ.-ին Երևան քաղաքը հանդիսացավ գրքի համաշխարհային մայրաքաղաք, այն հռչակվեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից, և, կարծում ենք, այս պատվաբեր տիտղոսին արժանի եղավ Երևանն իր տեղական և միջազգային ծրագրերով: Տուրիզմի զարգացման գործոններից մեկը նաև միջազգային այսօրինակ երևույթներին, ծրագրերին մասնակիցը դառնալն է և պատասխանատվություն կրելը:

Մենք ձգտելու ենք Երևանը դարձնել այսօրինակ հեղինակություն բերող ծրագրերի մասնակից, որով նաև մասն ենք կազմում Եվրոպայի և աշխարհի մշակութային իրադարձություններին՝ համաքայլ լինելով այլ երկրների մայրաքաղաքների հետ:

Այս տարիներին էապես ավելացվեց գրադարաններում գրականության գրքացանկը, ֆոնդերը, որի մեջ հատկանշական է օտարալեզու գրականության ձեռքբերումը, մի շարք երկրների գրականության ու տեսաձայնային անկյունների բաժինների ստեղծումը: Ահռելի թարգմանական գրականությունը նույնպես կարևոր էր մեզ համար, որով այսօր բավականաչափ հագեցված են գրադարանները, թե՛ մասնագիտական, թե՛ քաղաքական, թե՛ գեղարվեստական գրականությամբ:

Առաջիկա տարիների տեսլականում կարող ենք մատնանշել անհրաժեշտությունը գրականության թվայնացման և ցանցերի ստեղծման, որոնց մասով արված են արդեն շոշափելի աշխատանքներ, սակայն բավարար համարել չենք կարող. ընթերցասրահների տեխնիկական հագեցվածությունը, հատկապես լինգոֆոնային արդի կաբինետների ստեղծումը կարևորվում է մեր գրադարանների կողմից:

Կենտրոնական գրադարանի տեղափոխման համար հարկ է, որ մայրաքաղաքը ունենա ճարտարապետական կոթողային, հայեցի լուծումներով մեծածավալ շենք, բարետես, գույքի ու ներքին ոճական հարդարմամբ, քանդակներով ու որմնանկարներով հիրավի մշակութային ներկայանալի ու գրավիչ մի շինություն։

Այն սպասարկման, ֆոնդի, վարչական մասի, ընթերցասրահի, մասնագիտական բաժինների մասեր ունենալուց բացի ցանկալի է, որ հագեցված լինի ցուցանմուշների առանձին թանգարանային հատվածով, տարաբնույթ միջոցառումների կազմակերպման համար ժամանակակից դահլիճով և այլն։ Այս շենք-շինությունը կարող է լինել նաև քաղաքի հնամենի որևէ շենքի ֆասադի հիմքով կառուցվող գերժամանակակից կառույց։

Երևան քաղաքում առկա են բազմաթիվ համերգային դահլիճներ, թատրոններ, որոնք հրաշալի ծառայում են իրենց նպատակին։ Նրանց մի մասը քաղաքապետարանի ենթակայության ներքո է, մի մասը Մշակույթի նախարարության։ Ցավոք, Երևանը չունի պետական կամ համայնքային հոգածության ներքո և ոչ մի կինոթատրոն։

Աշխարհում արդեն իր հեղինակությունն ունեցող «Ոսկե Ծիրանն» երևանյան միջազգային փառատոնն անգամ անցկացվում է չափազանց խիտ գրաֆիկով, օգտագործելով նաև կինոդիտումների համար ոչ այնքան մասնագիտացված սրահներ։ Անհրաժեշտություն է առաջացել նաև ունենալու քաղաքային մշակույթի բաղկացուցիչ հանդիսացող կինոթատրոններ, որոնք բոլորովին էլ պարտադիր չեն, որ լինեն 800, 1000 կամ ավելի հանդիսականի համար։

Այս ամենը որքան որ կարևորվում է մշակութային զարգացման համատեքստում նույնքան էլ շաղկապված է տուրիզմի բնագավառի հետ։

Հայաստանի կառավարության կողմից տուրիզմը հայտարարվել է տնտեսության զարգացման առաջնահերթություններից մեկը։ Զարգացմանը միտված քայլերին զուգահեռ կատարվում է արագ ու չվերահսկվող տուրիզմի վերլուծություն։

Այլևս ձևավորված է Երևան քաղաքի տուրիստական երթուղին, սակայն այն պիտի հագեցվի մշակութային մի շարք ատրիբուտներով, ծրագրերով, միջոցառումների ուղեկցությամբ, որոնք առավել գրավիչ կդարձնեն տեսարժան վայրերը։ Բազմալեզու ինֆոստրուկտուրաների ու կենտրոնների քանակի

ավելացումն ու ակտիվությունը էապես կնպաստի ոլորտի կառուցողական առաջընթացին։

Դեռևս որոշակի չէ Երևանի՝ որպես զբոսաշրջային քաղաքի դիմանկարը /երիտասարդական քաղաք, մշակութային քաղաք, փառատոնային և այլն/։

Երևանում հյուրանոցային սպասարկման ոլորտը ակնհայտ զարգացում է ապրում։ Ներկայումս առկա են մի շարք հեղինակավոր հյուրանոցային ցանցերի ներկայացուցչություններ։ Հյուրանոցների քանակը միշտ չէ, որ բավարար է, մանավանդ, երբ Երևանը այս կամ այն առիթի դեպքում հյուրընկալում է բազմաթիվ հյուրերի։ Խնդիր է նաև գնային քաղաքականությունը, որը դեռ պետք է կանոնակարգվի։ Հույս ունենք, որ առողջ մրցակցության արդյունքում տնտեսվարողները կկարողանան ճշգրիտ աշխատել՝ հետապնդելով երկարատև ու հաստատուն շահույթ, ունենալով տրամաբանված եկամտաբերություն։

Տուրիզմի լուրջ խոչնդոտ է հանդիսանում Երևան ժամանման ավիաթռիչքի գնային քաղաքականությունը, որը զարմանալիորեն տարբերվում է տարածաշրջանային քաղաքների ու մայրաքաղաքների գնացուցակներից։ Այստեղ, իհարկե, համայնքը, քաղաքապետարանը դերակատարում ուղիղ իմաստով չունի, սակայն հույս ենք հայտնում, որ այս խնդրի կանոնակարգումը նույնպես նպաստ կբերի տուրիզմի զարգացմանը և կանոնիկություն կբերի նաև տուրիստական բյուրոների և գործակալությունների համար։

Փաստենք, որ բարձրացված խնդիրները հնարավոր է, որ լուծում կգտնեն առաջիկա տարիներին, գուցե և ճիշտ 2025-ին կամ դրանից էլ հետո, սակայն այսօր քաղաքապետարանի պատրաստակամությունը, կամքն ու սկզբունքայնությունը վստահություն պիտի ներշնչի ամենքիս, քանզի լծված ենք ի գործ՝ հանուն մեր 2796-ամյա քաղաքի բարօրության ու զարգացման։

***

Մենք կերտում ու կառուցում ենք **Քաղաք**, որը թողնելու ենք մեր սերունդներին և այն պետք է լինի **մշակութային**, **հարմարավետ**, **բարեկարգ**, **տոնական**, **լուսավոր** ու **ժպտացող**։